Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԳԾ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 12. Գեղարքունիքի մարզ -ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.10.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 50 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 4 դեպքի վարում: Դեպքերից 3-ը վերաբերվել են համայնքապետարանի կողմից շահառուներին ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպմանը, 1-ը՝ շահառուի բնակարանի կոյուղու վթարի վերացմանը: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 7 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 16 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 11 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին:
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 22 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող երգ-երաժշտության, գեղարվեստական գրականության, ասմունքի, տեղեկատվական, շյուղագործության և ձեռագործության խմբակներին:
  - Ճաշարանի 28 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված շահառուների ծննդյան տարեդարձերին, Գիտելիքի եւ դպրության օրվան, Խաղողօրհներքին, Սեւանի ցերեկային կենտրոն հիմնադրման 21 ամյակին, Անկախության օրվան, Սահմանադրության օրվան նվիրված թվով 12 մշակութային միջոցառումներին, 4 էքսկուրսիաներին՝ դեպի ՀՀ տեսարժան վայրեր, ինչպես նաև Սևանի հոգևոր հովիվ տեր Ստեփանոսի և Ճամբարակի հոգևոր հովիվ տեր Ղևոնդի հետ տեղի ունեցած հանդիպումներին:
  - Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում մեկ շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 6 շահառուի համար՝ ճնշման չափում, 2 շահառուի համար՝ վերքի մշակում եւ վիրակապում:
  - 3 շահառու ( շարունակական) օգտվել է լվացքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Շահառուների համար կազմակերպված էքսկուրսիան դեպի Դիլիջան, Հաղարծին եւ Գոշավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/misxwa),
- Երգ-երաժշտության խմբակը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/lblvgg),
- Էքսկուրսիան դեպի Գառնի, Գեղարդ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zbczeu),
- Շահառուի ծննդյան տարեդարձին նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/qjjxux),
- Էքսկուրսիան դեպի Օձուն (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://shorturl.at/M7o0a),
- Անկախության տոնին նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/8odWB),
- Ձեռագործության խմբակի աշխատանքները (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/baKGp)։

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը։**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել։

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը)։**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության։

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար։**

Հաշվետու ժամանակահատվածում բարեգործական ճաշարանի բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելութուն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված թիմ բիլդինգին՝ ուղղված Կազմակերպության ողջ անձնակազմի թիմային ոգու բարձրացմանը, փորձի փոխանակմանը։

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/50 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 27 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 19 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 4 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 15 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 31 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 50 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Ժամանցի կազմակերպում<br>Բժշկական օգնություն<br>Լվացքի ծառայություն | 28<br>6<br>3 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 10.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)